

ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ  
ՔՈԼԵՁ

*«Գրադարանային գործ» բաժին*

**Դիպլոմային աշխատանք**

**Թեմա՝ «Գրքի ստեղծումը մագաղաթից մինչև  
աուդիոգիրք»**

*Ուսանող՝ Նարինե Թադևոսյան*

*Ղեկավար՝ Նոնա Գրիգորյան*

ԵՐԵՎԱՆ 2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### ԳԼՈՒԽ 1. Գրքի ստեղծումը մագաղաթից մինչև էլեկտրոնային գիրք

#### Գլուխ 1.1 Գիրք

#### Գլուխ 1.2 Ինչպե՞ս է սկզբնավորվել գիրքը

#### Գլուխ 1.3 Ձեռագիր

#### Գլուխ 1.4 19-20-րդ դարեր

### ԳԼՈՒԽ 2 Գրքի ստեղծման գործընթացը

#### Գլուխ 2.1 Տպագրություն

#### Գլուխ 2.2 Գործընթաց

#### Գլուխ 2.3 Էլեկտրոնային գրքեր

### ԳԼՈՒԽ 3 Հայ գիրքը

#### Գլուխ 3.1 Հայ գրքի ստեղծումը

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Գրքերն աշխարհի արտացոլանքն են, որոնք պարունակում են նրա անսահման խորությունը, բազմազանությունն ու անկանխատեսելիությունը:*

### Ժան Պոլ Սարտր

Գիրքը՝ որպես տեղեկատվության փոխանցման կարևորագույն արժեք, գնահատված է եղել բոլոր ժամանակներում: Հասարակության պատմական զարգացմանը զուգահեռ այն կատարել է սովյալ ժամանակահատվածի ձեռքբերումներն ապագա սերունդներին փոխանցելու բարդ գործառույթը, ինչը հնարավորություն է տվել ճիշտ գնահատելու անցյալը: Այս երևույթն առավել ընդգծվում է, երբ անդրադարձ ենք կատարում հայ գրքարվեստի պատմությանը: Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը գոյատևման համար կառչել է փրկության ակունքներից, գիրքը և գիրը հանդես են եկել իրենց ազգափրկիչ առաքելությամբ՝ ապագա սերունդներին ի պահ տալով պատմական փաստերը, գիտական ձեռքբերումները, գրական-գեղարվեստական պատկերացումները:

Սույն դիպլոմային աշխատանքի թեման «Գրքի ստեղծումը «մագաղաթից» մինչև «աուդիո գիրք»»-ն է: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից և գրականության ցանկից:

Թեմայի կարևորությունը կայանում է նրանում, թե ինչպես է ստեղծվել «գիրք» կոչվող առեղծվածը: Ինչպես գիտենք, մինչև որոշակի ժամանակաշրջան բանավոր խոսքը եղել է տեղեկատվության միակ աղբյուրը, գիտելիքի փոխանցումը կատարվել է մարդուց մարդ, բերանից բերան: Մարդիկ սկսեցին փնտրել ուղիներ՝ տեղեկատվությունը որևէ նյութական հիմքի վրա ամրագրելու համար: Գրքի սկզբնավորումը կապված է գրի ստեղծման հետ, որը մի քանի հազար տարվա պատմություն ունի: Պատմության մեջ առաջին գրքերը կարելի է համարել

եգիպտական մագաղաթները, որոնք պատրաստվում էին կենդանու մշակված կաշվից և անցյալում օգտագործվում էին հիմնականում վրան գրելու համար:

Հռոմեական կայսրության անկումից հետո կամաց-կամաց ձևավորվեց գրքի մշակույթը: Տպագրության հայտնագործությունից և ընդունումից առաջ գրեթե բոլոր գրքերի կրկնօրինակումը կատարվում էր ձեռքով, որի գործընթացը երկար էր և աշխատատար: Առաջին գրքերի ստեղծման համար օգտագործվել է մագաղաթ կամ հորթի կաշի: Կազմը պատրաստվում էր փայտից և պատվում կաշվով:

Սկզբնապես գրքերն արտագրվում, կրկնօրինակվում էին զլխավորապես մենաստաններում: 13-րդ դարում, երբ ձևավորվեցին համալսարանները, գրքի պահանջարկն աճեց, և գրքերի կրկնօրինակման նոր համակարգ ստեղծվեց: 19-րդ դարի սկզբին լայն տարածում գտավ շոգետուրբիներով տպագրությունը: Այս մեթոդով գործող մեքենաները տպում էին 1100 թերթ 1 ժամում, սակայն աշխատողները 1 ժամում կարող էին մուտքագրել միայն 2000 տառ: 20-րդ դարի կեսերին եվրոպական գրքի տպագրությունը 1 տարում ավելացավ շուրջ 200 000 անուն գրքով, որը և կարելի է համարել «տեղեկատվական պայթյուն»: Էլեկտրոնային տպագրության և համացանցի ի հայտ գալով՝ պարզ դարձավ, որ շատ նոր տեղեկատվություն չի տպվի թղթե գրքերում, ստեղծվեցին համապատասխան սարքեր՝ գիրքը էլեկտրոնային տարբերակով կարդալու համար: Այսինքն՝ գրքի առցանց տարբերակը հասանելի կլինի բոլորին:

# ԳԼՈՒԽ 1. Գրքի ստեղծումը մագաղաթից մինչև էլեկտրոնային գիրք

## Գլուխ 1.1. Գիրք

Գիրքը ձեռագիր, տպագիր կամ այլ կրիչի վրա գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, գիտական բովանդակությամբ ստեղծագործություն է: Ներկայումս առավել տարածվածը թղթի վրա տպագրված գիրքն է: Գիրքը կազմված է բնագրից, տիտղոսաթերթից և կազմից. վերջինս երբեմն ունենում է նաև կազմաշապիկ: Տիտղոսաթերթի վրա գրվում են հեղինակի անունը և գրքի վերնագիրը, հրատարակության վայրը և տեսակը, հրատարակչությունը, տպագրության տարեթիվը:

Գիրքը՝ որպես նյութական առարկա, ուղղանկյուն էջերի ամբողջություն է՝ ամրացված, կարված կամ այլ եղանակով միացրած, իսկ հետո կապված ավելի ամուր, հարաբերականորեն ոչ այնքան ճկուն պաշտպանիչ շերտի ճկուն կոնակին: Այս բոլոր գործողությունների համար կա հատուկ տերմին՝ ձեռագիր: Ձեռագիրը գրավոր ստեղծագործությունների կամ հիշատակարանների ձևավորման պատմության մեջ անմիջականորեն հաջորդում է մագաղաթին: Ձեռագրի եզակի միավորը կոչվում է թերթ, իսկ թերթի յուրաքանչյուր կողմը՝ էջ:

Ի սկզբանե գիրքն ընկալվել է որպես մտավոր գործունեության արդյունք, մեծածավալ երկ, որի ստեղծումը պահանջում է ժամանակի զգալի ներդրում և նույնքան էլ (թեպետ ոչ այնքան մեծ) ժամանակ ընթերցելու համար: Գիրքն այս առումով ընկալելի է նեղ և լայն իմաստներով. նեղ իմաստով գիրքը մեծածավալ ստեղծագործության լիարժեք բաժինը կամ մասն է. այս իմաստով այն կիրառվել է անտիկ ժամանակներում, երբ երկար երկերը պետք է գրվեին մի քանի մագաղաթների վրա, իսկ յուրաքանչյուր մագաղաթ պետք է նույնականացվեր այն գրքի հետ, որի մասն է այն կազմում: Այսպես, օրինակ՝ Արիստոտելի «Ֆիզիկան», ինչպես Աստվածաշունչը, բաղկացած է մի քանի տարբեր գրքերից: Լայն իմաստով գիրքը ստեղծագործական ամբողջությունն է այնպիսի մասերի, որոնք կոչվում են գրքեր, գլուխներ և դիտվում են որպես ընդհանուրի բաղկացուցիչ մասեր:

Նյութեղեն գրքի մտավոր բաղադրիչը, սակայն, չի ենթադրում, որ գիրքը պարտադիր գրավոր ստեղծագործություն պիտի պարունակի գիրք համարվելու համար: Այն կարող է ներառել նկարներ, փորագրանկարներ կամ լուսանկարներ, կամ էլ խաչքառեր ու նկարազարդման տարրեր: Գիրքը՝ որպես նյութական առարկա, կարող է պարունակել դատարկ էջեր, տողեր՝ նշումներ կատարելու համար, կարող է լինել օրագիր, հաշվառման գիրք, ինքնագրերի գիրք, նշումների գիրք: Մի շարք գրքեր պատրաստվում են բավականին հաստ և ամրակազմ էջերով, որպեսզի կարողանան կրել իրենց վրա զանազան այլ առարկաներ. այդպիսի էջեր կարող է ունենալ լուսանկարների ալբոմը: Գրքերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով (e-book) և այլ ֆորմատներով:

Ակադեմիական ընկալումների համաձայն՝ մենագրությունը մասնագետի ակադեմիական աշխատանքն է, այլ ոչ թե տեղեկատու աշխատանք որևէ գիտական թեմայի շուրջ, թեպետ գրադարանագիտության մեջ և ինֆորմատիկայում մենագրություն նշանակում է ոչ պարբերական հրատարակություն՝ ավարտված մեկ գրքով կամ ավարտուն թվաքանակի գրքերով (անգամ Պրուստի՝ յոթ գրքից բաղկացած «Կորուսյալ ժամանակի որոնումներում» շարքը)՝ ի հակադրություն պարբերական հրատարակությունների, ինչպիսիք են ամսագիրը, հանդեսը կամ թերթը: Անհազ ընթերցողին կամ գրքերի կոլեկցիոներին ասում են գրքասեր կամ գրքամոլ: Խանութը, որտեղից գնում են գրքեր, կոչվում է գրախանութ կամ գրատուն, թեպետ գրքերը վաճառվում են նաև զանազան այլ վայրերում: Գրքեր կարելի է վերցնել նաև գրադարաններից: Գուգլի տվյալների համաձայն՝ 2010 թվականի դրությամբ տարբեր վերնագրերով մոտ 130,000,000 գրքեր են հրատարակվել: Առավել զարգացած երկրներում էլեկտրոնային գրքերի լայն կիրառության արդյունքում տպագիր գրքերի վաճառքը նվազել է՝ չնայած էլեկտրոնային գրքերի վաճառքը նվազեց 2015 թվականի առաջին կեսին:

## Գլուխ 1.2. Ինչպե՞ս է սկզբնավորվել գիրքը

Հնում տեղեկատվության միակ աղբյուրը բանավոր խոսքն էր, և գիտելիքի ու փորձի փոխանցումը իրականացվում էր մարդուց մարդ, բերանից բերան: Այս դեպքում տեղեկատվությունը կորչում էր կամ խեղաթյուրվում: Այդ պատճառով մարդիկ սկսեցին ուղիներ փնտրել՝ տեղեկատվությունը որևէ նյութական հիմքի վրա ամրագրելու համար:

Ինչպես կոտրած ոտքը առանց հենակի չի կարող շարժվել, այնպես էլ գրքին է հարկավոր հենակ, իսկ այդ հենակը գիրն է: Հենց նրա ստեղծման հետ էլ կապված է գրքի սկզբնավորումը: Գիրն ունի մի քանի հազար տարվա պատմություն:

Գրքի սկզբնավորումը կապված է գրի ստեղծման հետ, որը մի քանի հազար տարվա պատմություն ունի: Անցյալում բաբելացիները, ասորեստանցիները և այլ հին ժողովուրդներ գրել են հիմնականում կավե սալիկների վրա: Պահպանվել է մ. թ. ա. III հազարամյակում սալիկների վրա գրված գեղարվեստական հնագույն՝ ասորաբաբելական «Գիլգամեշ» դյուցազներգությունը: Այդ եղանակով կազմված գրքերից են ստեղծվել առաջին գրադարանները: Չինաստանում գրել են հնդկեղեգից (բամբուկ) պատրաստված շերտիկների վրա և շարել ամուր թելի վրա: Ավելի ուշ չինացիները գրել են մետաքսի, իսկ մ. թ. II դարից՝ թղթի վրա: Հին Եգիպտոսում նախ գրել են կավե սալիկների, այնուհետև՝ պապիրուսի վրա, որը եղեգի մամլած շերտիկներն իրար սոսնձած մի քանի տասնյակ մետր երկարությամբ ժապավեն էր և պահվում էր գլանաձև փաթաթված:

Մ. թ. ա. II դարում Պերգամոն քաղաքում կենդանիների կաշվից պատրաստվել է նոր գրանյութ և քաղաքի անունով կոչվել պերգամենտ: Այն մեզ հայտնի մագաղաթն է: Մագաղաթե ամենահին ձեռագիրը Հոմերոսի «Իլիական» պոեմի՝ II դարում գրված մի հատված է: Մագաղաթը պապիրուսից ավելի ճկուն ու ամուր էր, հեշտությամբ ծալվում էր, իսկ ծալվածքի մասում թերթերը կարվում ու միացվում էին իրար: Միջնադարում մագաղաթե թերթերն ամփոփվում էին կաշեպատ կամ լաթապատ փայտե կազմի մեջ:

Գրքի զարգացման և ժողովրդականացման խոշոր ազդակ էր 1447 թ-ին Յոհան Գուտենբերգի տպագրության գյուտը, որով դրվեց գրքի տպագրության հիմքը:

Պատմության մեջ առաջին գրքերը կարելի է համարել եգիպտական մագաղաթները: Առաջին ձեռագիր մագաղաթները հայտնվել են ավելի ուշ՝ չհասած նոր դարաշրջան: Մեկ գիրք պատրաստելու համար հարկավոր է եղել ընտանի կենդանիների մի ամբողջ հոտ, որոնց կաշին անցնում էր հատուկ և երկարատև մշակում, ինչի արդյունքում ստացված գրքերի թերթերը միասին ամրացվում և կազմում էին փոքր ծավալներ, որոնց վրա տեղեկատվությունը բարեխղճորեն արտագրում էին հատուկ կրթություն ունեցող մարդիկ: Մեկ գրքի վրա աշխատում էին մի քանի վարպետներ, մեկը պատրաստում էր մագաղաթի թերթերը, մյուսը դնում էր նրանց վրա գրավոր նշաններ, իսկ երրորդը աշխատում էր նկարագարողումների վրա: Ժամանակի ընթացքում գրելը մեծ տարածում է գտնում և առաջ է գալիս գրքերի մեծ պահանջարկ, իսկ մագաղաթը շատ թանկ նյութ էր համարվում և նրանից գիրք պատրաստելը ձեռնտու չէր: Մարդիկ սկսեցին փնտրել նոր տարբերակներ և հետագայում մագաղաթը փոխարինվեց թղթով: Որոշակի տեղեկությունների համաձայն՝ պատմաբանները պնդում են, որ առաջին անգամ թուղթը ստեղծվել և օգտագործվել է Չինաստանում երկրորդից երրորդ դարերում՝ գրքեր պատրաստելու համար:

Այն պատրաստել են բամբուկից: Այս բույսի բարակ ու ճկուն ցողունը մաքրել են տերևներից, թրջել ջրում և մեծ դանակներով մանր-մանր կտրատել: Այնուհետև բամբուկը եփել և երկար ժամանակ ձեռել են հավանգով: Ծեծած զանգվածը լավ խառնել, ապա վրան ջուր և սոսինձ են ավելացրել: Բամբուկի շիլայից թերթեր պատրաստելու համար չինացիներն օգտվել են շերեփ-կաղապարից: Այդ կաղապարով թղթե զանգվածը հանել են չանից: Այս գործողության ժամանակ ցանցի վրա մնացել է թղթի բարակ շերտ, իսկ ջուրը թափվել ցանցի տակից: Պատրաստի թղթի թերթը դրել են սեղանին, նրա վրա երկրորդը, երրորդը... Երբ առաջացել է մի քանի հարյուր թերթերի կույտ, այն սեղմել են ծանր տախտակով, որպեսզի քամվի մնացած ջուրը: Ապա չորացրել են այդ թերթերը, և թուղթը արդեն պատրաստ էր: Պատրաստման

եղանակը խիստ գաղտնի է պահվել, իսկ Բացահայտողին սպառնացել է մահապատիժ, որի շնորհիվ շատ երկրներ Չինաստանից երկար տարիներ թուղթ են գնել: Հետագայում թղթի պատրաստման հայտնագործությունը հայտնվել է արաբների մոտ, այնտեղ գերի ընկած չինացիների միջոցով: Ավելի ուշ սկսել են պատրաստել Ճապոնիայում, Կորեայում, Կենտրոնական Ասիայում և Հնդկաստանում: Թուղթը Եվրոպա է մտնում մոտավորապես 10-րդ դարում: Մագաղաթների համեմատությամբ այն ավելի էժան էր և ավելի մեծ տարածում է գտնում: Գրքերի հրատարակչության մեջ հեղափոխություն տեղի ունեցավ 15-րդ դարի կեսերին, երբ գերմանացի վարպետ Յոհան Գուտենբերգը առաջարկեց տպագրության յուրօրինակ տարբերակ: Իր տպագրության մեքենայի համար նա օգտագործեց մետաղական տառեր և թանաք, որը հնարավորություն տվեց համեմատաբար ավելի արագ և մեծ քանակությամբ գրքեր պատրաստել: Գրքերի ստեղծման այս մեթոդը մեծ տարածում գտավ: Դրանից հետո գրքերը մատչելի դարձան մի շարք ընթերցողների համար:

Երբ ստեղծվեցին գրային համակարգեր վաղ շրջանում ձևավորված քաղաքակրթությունների կողմից, սկսեցին գրել զանազան առարկաների վրա, ինչպես օրինակ՝ քարի, կավի, սալիկների, ծառի կեղևի, մետաղյա իրերի, ոսկորների և մագաղաթների վրա. սա ուսումնասիրվել է վաղ արձանագրությունները հետազոտող գիտության կողմից:

Մագաղաթները կարող են պատրաստվել պապիրուսից՝ թղթանման խիտ նյութից՝ պատրաստված պապիրուս բույսի ցողունների հյուսման, ապա դրանք մուրճանման գործիքով այնքան հարվածելու արդյունքում, մինչև այն հարթ դառնա: Պապիրուսը՝ որպես գրելու միջոց, օգտագործվել է Հին Եգիպտոսում, հավանաբար շատ վաղ՝ Առաջին դինաստիայի գոյության շրջանում, թեպետ առաջին վկայությունը Հինգերորդ դինաստիայի Նեֆերիթկարա Կակաի փարավոնի (Ք.ա. մոտ 2400 թ.) հաշիվների գրքերն են: Պապիրուսի շերտերը սոսնձում էին՝ ստանալու մագաղաթ: Ծառի կեղևները, ինչպես օրինակ լայմինը և այլ նյութեր ևս օգտագործվում էին:

Ըստ Հերոդոտոսի՝ գիրը և պապիրուսն առաջինը փյունիկացիները բերեցին Հունաստան Ք.ա. մոտ 10-րդ կամ 9-րդ դարում: Պապիրուսի՝ որպես գրելանյութի, հունարեն անվանումը՝ բիբլիոն, իսկ գրքինը՝ բիբլոս, ծագում են փյունիկյան նավահանգստային քաղաք Բիբլոսից, որտեղից պապիրուսը արտահանվել է Հունաստան: Հունարենից է սերում նաև հատոր բառը (հուն.՝ τόμος), որը սկզբնապես նշանակել է շերտ կամ կտոր, իսկ դրանից հետո սկսեց նշանակել պապիրուսի գլանաթերթ:

Հելլենիստական, հռոմեական, չինական, եբրայական և մակեդոնական մշակույթներում մագաղաթները գրքի գերակշռող ձևն էին՝ անկախ այն հանգամանքից, թե ինչից էին պատրաստված՝ պապիրուս, թուղթ, թե մագաղաթ: Գրքի առավել ժամանակակից ձևաչափը հռոմեական աշխարհի հասավ բավականին ուշ, իսկ Ասիայում մագաղաթը շարունակեց տիրապետող լինել շատ ավելի երկար:

### **Գլուխ 1.3. Ձեռագիր**

Մ.թ.ա. 5-րդ դարում Հռոմեական կայսրության անկումը վերջ դրեց նաև Հին Հռոմի մշակույթին: Դժվարացավ պապիրուսի ձեռքբերումը եգիպտացիների հետ կապի բացակայության հետևանքով, իսկ մագաղաթը, որն օգտագործվել էր դարեր շարունակ, դարձավ գլխավոր գրելանյութը: Մագաղաթը պատրաստվում էր կենդանու մշակված կաշվից և անցյալում օգտագործվում հիմնականում վրան գրելու համար: Մագաղաթը հիմնականում պատրաստվել է հորթի կաշվից, ինչպես նաև գառան կամ այծի կաշիներից: Պատմականորեն այն օգտագործվել է փաստաթղթերի, նշումների կամ գրքի էջերի համար: Կաշին մոխրով աղաղում էին, քերթում և չորացնում մեծ ճնշման ներքո: Այն չեն մզացնում, և հենց սրանով է դա տարբերվում կաշվից: Այսպիսով՝ այն ավելի հարմար է գրելու համար, սակայն շատ զգայուն՝ հարաբերական խոնավության փոփոխություններին, այդ իսկ պատճառով էլ վերամշակվում է, երբ ամբողջությամբ խոնավանում է:

Արևմտյան Հռոմեական կայսրության մենաստաններում շարունակվում էին գրի լատինական ավանդույթները: Կասիոդորը Վիվարիում մենաստանում (հիմնադրված մոտ 540 թվականին) ընդգծում էր տեքստերը կրկնօրինակելու կարևորությունը: Սուրբ Բենեդիկտ Նուրսիացին ավելի ուշ իր «Սուրբ Բենեդիկտի վարք»-ում կարևորում է ընթերցանությունը: «Սուրբ Բենեդիկտի վարք»-ը (Գլուխ XLVIII), որը մի շարք անգամներ ընդգծում է ընթերցանության դերը, մեծապես ազդեց միջին դարերի մենաստանային մշակույթի վրա. այդ աշխատության շնորհիվ է, որ հոգևորականները ժամանակի հիմնական ընթերցողներն էին: Հռոմեական կայսրության ավանդույթը և ոճը դեռ տիրապետող էր, սակայն կամաց-կամաց ձևավորվեց միջնադարյան գրքի մշակույթը:

Տպագրության հայտնագործությունից և ընդունումից առաջ գրեթե բոլոր գրքերի կրկնօրինակումը կատարվում էր ձեռքով, որն էլ բարձրացնում էր գրքի արժեքը, և դարձնում այն համեմատականորեն հազվադեպ: Փոքր մենաստանները սովորաբար ունեին ընդամենը մի քանի տասնյակ գիրք, միջինները՝ հավանաբար մի քանի հարյուր: 9-րդ դարում մեծ հավաքածուներն ունեին շուրջ 500 գիրք, և նույնիսկ միջնադարի վերջերին Ավինյոնի պապական գրադարանը և Փարիզի Սորբոնի համալսարանն ունեին ընդամենը մոտ 2000 գիրք:

Մենաստանի ձեռագրային կրկնօրինակման սենյակը սովորաբար տեղակայված էր ժողովատան մոտ: Արհեստական լույսն արգելված էր՝ մտահոգություն ունենալով, որ այն կարող է վնասել ձեռագիրը: Գրագիրների հինգ տեսակներ կային՝

- Գեղագիրներ, ովքեր զբաղվում էին գեղեցիկ գրքի թողարկմամբ:
- Կրկնօրինակողներ, ովքեր զբաղվում էին բուն նյութի վերարտադրմամբ և համապատասխանության ստուգմամբ:
- Սրբագրիչներ, ովքեր ստուգում էին և համեմատում ավարտուն գիրքը ձեռագրի հետ, որտեղից այն արտագրվել էր:
- Նկարագարողներ, ովքեր պատկերագարումներ էին անում:
- Մակագրող, ով համապատասխան տառերը կարմիրով էր ներկում:

Գրքի ստեղծման գործընթացը երկար էր և աշխատատար. մագաղաթը պետք է պատրաստվեր, հետո անջատ էջերը պիտի կանոնավորվեին և կարգավորվեին բութ գործիքով կամ արճիճով, որից հետո պիտի գրվեր տեքստը գրիչի կողմից, ով ազատ տարածություն էր թողնում նկարագարողների և մակագրողների համար: Ի վերջո գիրքը կարվում էր կազմարարի կողմից:

Վաղ շրջանում թանաքի տարբեր տեսակներ կային, որ սովորաբար պատրաստվում էին մրից և խեժից, իսկ ավելի ուշ նաև գիստորից և երկաթի սուլֆատից: Սա գրվածքին տալիս էր շագանակագույն, սև երանգներ, սակայն սևը և շագանակագույնը օգտագործվող միակ գույները չէին: Կան տեքստեր՝ գրված կարմիրով կամ նույնիսկ ոսկեգույնով, իսկ նկարագարողման համար զանազան այլ գույներ էին օգտագործվում: Առավել շքեղ ձեռագրերի համար ամբողջ մագաղաթը ներկվում էր մանուշակագույն, իսկ նրա վրա գրվում էր ոսկեգույնով կամ արծաթագույնով:

7-րդ դարում իռլանդացի վանականները սկսեցին բառերի միջև բացատ թողնել: Սա հեշտացրեց ընթերցանությունը: Այս վանականները մտադիր էին քիչ առնչվել լատիներենի հետ: Ինչնիցե, բառերի միջև բացատ թողնելը ընդհանրական երևույթ չդարձավ մինչև 12-րդ դարը: Վիճարկվում էր այն հարցը, որ բացատի կիրառությունը ցույց է տալիս անցումը կիսաձայն ընթերցանությունից լուր ընթերցանության:

Առաջին գրքերի էջերի համար օգտագործվում էր մագաղաթ կամ հորթի կաշի: Գրքի կազմը պատրաստվում էր փայտից և պատվում կաշվով: Քանի որ չոր մագաղաթը կարող էր ընդունել այն ձևը, որն այն ուներ մինչ մշակման գործընթացը, գրքերն ամրացվում էին ճարմանդներով և կաշեփոկերով: Ուշ միջնադարի ընթացքում, երբ ի հայտ եկան հանրային գրադարանները, մինչև 18-րդ դարը գրքերը հաճախ շղթայվում էին գրադարակին կամ գրապահարանին՝ կանխելու գողության դեպքերը: Այս շղթայված գրքերը կոչվում էին *libri catenati*:

Սկզբնապես գրքերն արտագրվում, կրկնօրինակվում էին զլխավորապես մենաստաններում, ամեն անգամ մեկ գիրք: 13-րդ դարում,

երբ համալսարաններ ձևավորվեցին, գրքերի պահանջարկն աճեց, և գրքերի կրկնօրինակման նոր համակարգ ստեղծվեց: Գրքերը բաժանվում էին երկու չկարված մասերի, որոնք տրվում էին տարբեր կրկնօրինակողների, որով և գրքի ստեղծման արագությունը նշանակալիորեն մեծացավ: Համակարգը պահվում էր աշխարհիկ գրահրատարակիչների համքարությունների կողմից, որը թողարկում էր թե՛ կրոնական, թե՛ ոչ կրոնական նյութեր:

Հուդայականությունը պահպանել է մագաղաթի կիրառությունը մինչ օրս: Հուդայական սովորույթի համաձայն՝ Թորայի գլանաձև ձեռագիրը, որ դրվում է սինագոգում, պարտադիր պետք է ձեռքով գրված լինի մագաղաթի վրա, այլ ոչ թե լինի տպագիր՝ չնայած միությունը կարող է օգտագործել տպված աղոթագրքեր սինագոգից դուրս սովորելու համար: Գրիչը խորապես հարգված մարդ է հրեական ցանկացած օրինապահ համայնքի կողմից:

#### **Գլուխ 1.4. 19-20-րդ դարեր**

19-րդ դարի սկզբներին լայն տարածում գտավ շոգետուրբիներով տպագրությունը: Այս մեթոդով գործող մեքենաները տպում էին 1100 թերթ մեկ ժամում, սակայն աշխատողները մեկ ժամում կարող էին մուտքագրել միայն 2000 տառ: Միատիպ և տողատիպ տպագրական մեքենաները կիրառության մեջ մտան 19-րդ դարի վերջերին: Նրանցով հնարավոր էր մուտքագրել 6000 տառ մեկ ժամում և մեկ ամբողջական տող միանգամից: Բազմաթիվ բարելավումներ եղան տպագրական մամուլում: Բարելավվեցին նաև մամուլի ազատության պայմանները՝ գրաքննության աստիճանաբար ներմուծվող մեղմացուցիչ օրենքների շնորհիվ: 20-րդ դարի կեսերին եվրոպական գրքի տպագրությունը մեկ տարում ավելացավ շուրջ 200,000 անուն գրքով:

20-րդ դարի ընթացքում գրադարաններն արձանագրեցին տպագրության ավելի մեծ աճ, որ երբեմն կոչում են «տեղեկատվական պայթյուն»: Էլեկտրոնային տպագրության և համացանցի ի հայտ գալով՝ պարզ դարձավ, որ շատ նոր տեղեկատվություն չի տպվի թղթե գրքերում, այլ առցանց հասանելի կլինի թվային գրադարանի, խտասալիկի,

Էլեկտրոնային գրքի կամ առցանց այլ միջոցի շնորհիվ: Առցանց գիրքն էլեկտրոնային գիրք է, որ հասանելի է համացանցի միջոցով: Թեպետ շատ գրքեր թողարկվում են թվայնացված, դրանցից շատերը հասանելի չեն հանրությանը, այդ իսկ պատճառով գրքի թղթային տարբերակով տպագրության անկում չկա: Փորձեր են արվել, ինչևէ, հանրային սեփականություն համարվող գրքերը փոխակերպել թվային՝ անսահմանափակ տարածման և հասանելիության համար: Այս միտքն առաջ քաշվեց «Գուտենբերգի» նախագիծ և «Distributed Proofreaders» վեբ-նախագծի համատեղ նախաձեռնությամբ: Նորամուծություններ եղան նաև գրքի տպագրության ոլորտում: Այնպիսի տեխնոլոգիան, ինչպես POD (print on demand) է, հրատարակման գործընթացը դարձրեց առավել հեշտ և մատչելի: Ըստ անհրաժեշտության՝ տպագրությունը թույլ տվեց հրատարակիչներին խուսափել մեծ ծախսերից մեծածավալ տպագրության պարագայում՝ հրատարակելով նաև քիչ վաճառվող գրքերը, քան զրկել դրանք տպագրության հնարավորությունից:

## **ԳԼՈՒԽ 2. Գրքի ստեղծման գործընթացը**

### **Գլուխ 2.1. Տպագրություն**

15-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը գրքի տպագրության և կազմարարության եղանակները հիմնականում անփոփոխ մնացին: Չնայած մեքենայացման տեմպերին՝ գրքի տպիչը 1900 թվականին շատ ընդհանրություններ ուներ գուտենբերգյան տպիչի հետ: Գուտենբերգի գյուտը գրաշարային մետաղյա գրաձուլիչներն էին՝ համապատասխանեցված բառերին, տողերին և էջերին, իսկ հետո վերածված տպագրանյութի՝ բազմաթիվ օրինակներ ստանալու համար: Ժամանակակից թղթային գրքերը տպվում են տպվող գրքերի համար նախատեսված հատուկ թղթերի վրա: Ավանդաբար գրքի թղթերը լինում են ճեփ-ճերմակ կամ դեղին (ավելի հարմար է ընթերցանության համար), անթափանց են, որպեսզի մեկ էջից մյուսը տեքստը չերևա, և սովորաբար ունենում է տրամաչափի նոսրացման կամ խտացման

առանձնահատկություն հատկապես գրքի կողքի կազմության համար: Կախված գրքի տեսակից՝ տարբեր որակի թղթեր են օգտագործվում՝ կավճաթուղթ, օֆսեթ, բարձր որակի կավճաթուղթ և հատուկ բարձր որակի թուղթ:

Այսօր գրքերի մեծ մասը տպվում է օֆսեթ տպագրությամբ: Երբ գիրքը տպվում է, թղթերը դրվում են հաստոցի վրա այնպես, որ տպվելուց հետո դուրս գան ճիշտ հաջորդականությամբ: Մեր օրերում գրքերը սովորաբար տպվում են մի քանի ստանդարտ չափերով, որն ընդունված է կոչել տպագրական մամուլ. այն կախված է թերթի չափերից (ուստի նաև հաստոցի չափերից): Սա տարածված էր 200 կամ 300 տարի առաջ և տիրապետող է մինչ օրս: Բրիտանական ստանդարտներն այս առումով տիրապետող են անգլիախոս աշխարհում՝ բացառությամբ ԱՄՆ-ի: Եվրոպական գրքի արտադրության մեջ գործում են միանգամայն այլ ստանդարտներ:

## **Գլուխ 2.2. Գործընթաց**

**Էջադրում:** Մերօրյա տպվող գրքերը կազմվում են՝ ըստ հատուկ ձևաչափի, որ կոչվում է էջադրում: Չնայած էջադրման պարագայում գործում է բազմազանություն, այնուամենայնիվ, այժմյան գրքերը տպելիս հավաստարիմ են մնում գրքի բաղադրիչներին և բովանդակությանը: Ըստ ընդունված ձևի՝ նախ կազմն է, հետո՝ տիտղոսաթերթը: Տիտղոսաթերթի վրա սովորաբար գրվում է հեղինակի (հեղինակների) անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը, գրքի վերնագիրը (ենթավերնագիրը, եթե կա), հրատարակության վայրը, հրատարակության տեսակը և հրատարակության տարեթիվը: Տիտղոսաթերթի դարձերեսին գրվում են գրքի էլից տվյալները՝ գրադարանային թեմատիկ դասակարգման կոդերը (ՀՏԴ, ԳՄԴ), գրքի մատենագիտական նկարագրությունը և անտագիան, *ISBN* կոդը, որը եզակի է յուրաքանչյուր գրքի համար, և հեղինակային իրավունքի նշանը: Այս ամենին արդեն հաջորդում է բուն տեքստը իր բովանդակությամբ, ծանոթագրություններով ու հավելվածներով, եթե դրանք կան: Ետևի մասի կազմին դրվում է հեղինակի նկարը կենսագրությամբ, իսկ ներքևի մասում գծիկավոր ծածկագիրը՝ կրկին, եթե դրա

անհրաժեշտությունը կա: Սրանք ընդհանուր կետեր են, որոնք ոչ բոլոր դեպքերում են պահպանվում՝ կախված գրքի տեսակից, նպատակադրումից և հեղինակի կամ հրատարակչի նախասիրությունից:

**Տպագրություն:** Որոշ գրքեր՝ հատկապես փոքր տպաքանակով գրքերը, տպվում են օֆսեթային տպագրությամբ, սակայն շատ գրքեր էլ այսօր տպվում են ցանցային տպագրությամբ, որի ժամանակ կիրառվում է շարունակական թղթագլան, և հետևաբար կարող է կարճ ժամանակում շատ օրինակներ տպել: Քանի որ տպագրական գիծը պտտվում է, ամբողջական գիրքը հավաքվում է մեկտեղ: Ցանցային տպագրությունը կատարում է թերթերը ծալելու, դրանց տարբեր մասերը միմյանց կցելու գործողությունները: Պետք է նկատի ունենալ, որ գրքի երկու էջ է տպվում մեկ անգամով, այլ ոչ թե մեկ ամբողջական գիրքը: Մինչև վերջնական տպագրությունը, փորձանմուշային օրինակներ են տպվում՝ կանխելու տպագրական խոտանը:

Տպագրության նախապատրաստական աշխատանքները կատարվում են տպագրիչի կողմից պահանջված որակը ստանալու նպատակով: Այդ ժամանակ է, որ հաստոցը բարձրացվում և դրվում է մեքենայի մեջ, մաքրվում է նախորդ աշխատանքից մնացած թափոնը և ընթացք է տրվում տպագրությանը: Հենց հրատարակիչը որոշում է, որ ամեն ինչ պատրաստ է, տպագրությունը սկսվում է: Նման նախապատրաստական աշխատանքներ են կատարվում նաև ծալելու և կարելու ընթացքում:

**Կազմարարություն:** Երբ դրոշմվում են և հավաքվում տպված օրինակները, տարվում են կազմատուն: Ժամանակին եղել են միայն կազմարարությամբ զբաղվող և դրանում հմտացած կազմակերպություններ: Այսինքն՝ մուտքագրումը, տպագրությունը կատարվում էր մի վայրում, կազմարարությունը՝ մեկ այլ: Երբ տպագրությունը մետաղյա էր, գիրքը, որն արժանացել էր տպագրության, պետք է լիներ խոշոր, դյուրաբեկ և ծանր: Որքան քիչ էր այն տեղափոխության ենթարկվում այս վիճակում, այքան ավելի լավ. դրա համար էլ տպագրությունը պետք է իրականացվեր նույն վայրում, որտեղ գրքի շարվածքն էր արվում: Արդեն տպված թերթերը կարող էին տեղափոխվել: Մեր օրերում գրքի տպագրության համակարգչայնացման արդյունքում

աշխատանքի շարվածքի մասը հակառակ հաջորդականությամբ է իրականացվում. հիմա դա արվում է կա'մ հրատարակչի, կա'մ հեղինակի, կա'մ էլ տեքստը մուտքագրող այլ անձի կողմից: Այսօր հնարավոր չէ պատկերացնել տպարանն առանց կազմատան և հակառակը:

Եթե գիրքը կոշտ կազմով է, նրա ուղին կազմատանը ավելի երկար է տևում, քան երբ այն փափուկ կազմով է: Անկար կազմարարությունը այժմ զգալիորեն տարածված է: Գրքի կազմումն իրականացվում է՝ օգտագործելով ասեղներ, իսկ, օրինակ, «Մակքեյն» կազմարարության դեպքում կլոր անցքեր են արվում էջերին, որոնք օգտագործվում են նաև դպրոցական գրքերը կարելիս:

**Ավարտ:** Գրքի կոնակի պատրաստումը կատարվում է գրքի կազմարարության ավարտին: Հիմնականում ստվարաթղթի երկու կտորները դրվում են սոսնձված կտորի վրա, իսկ դրանց միջև դրվում և սոսնձվում է գրքի կողքի մասի լայնության այլ ստվարաթուղթ: Կտորի իրար ծածկող ծայրերը (մոտ 5/8 տրամագծով) ծալվում են ստվարաթղթի շուրջ և ամուր սեղմվում, որպեսզի սոսնձվեն: Կոնակը պատրաստելուց հետո կուտակված օրինակներն անցնում են ջերմային հատուկ ռեժիմով ձևավորման փուլ:

### **Գլուխ 2.3. Էլեկտրոնային գրքեր**

2000-ական թվականներին համակարգչային հասանելի դյուրակիր միջոցների տարածման պայմաններում զանգվածային լրատվամիջոցների համար ժամանակի հրամայականը դարձավ էլեկտրոնային եղանակով տեքստի տարածումը: Այսպես ստեղծվեց էլեկտրոնային գիրքը, որը թվային տարբերակով գրքի հրատարակումն է: Էլեկտրոնային գիրքը սովորաբար հասանելի է համացանցի միջոցով, թեպետ հնարավոր է նաև խտասայիկով և այլ եղանակներով տարածել: Էլեկտրոնային գիրքը հնարավոր է ընթերցել LED էկրանով համակարգչի, սմարթֆոնի, պլանշետի կամ

Էլեկտրոնային դյուրակիր այնպիսի ընթերցիչների միջոցով, ինչպես Sony Reader-ը, Barnes & Noble Nook-ը, Kobo eReader-ը և Amazon Kindle-ը:

1971 թվականին Մայքլ Հարտը ստացավ անսահմանափակ թույլտվություն Xerox Sigma V-ի մեծ համակարգչի մեքենայական ժամանակին Իլլինոյս նահանգի համալսարանում: Փորձելով այդ ռեսուրսը օգտագործել արժանի՝ նա ստեղծեց առաջին էլեկտրոնային գիրքը՝ ԱՄՆ-ի Անկախության Հռչակագիրը, երբ տպեց նրա տեքստը համակարգչի մեջ: Այսպես գրքերի մեծ քանակության էլեկտրոնային պատճենների ստեղծման ճանապարհով սկիզբ դրվեց «Գուտենբերգ» նախագծին:

Առաջին մասսայական էլեկտրոնային ընթերցիչներն էին մոնոքրոմային LCD էկրաններով սարքավորումները՝ թողարկված գրեթե միաժամանակ 1998 թվականին NuevoMedia Softbook Press ընկերությունների կողմից: Դրա հետևանքով նրանք եղան մոդիֆիկացված, առաջացան սարքավորումներ բազմազան էկրաններով և մեծ ֆունկցիոնալությամբ: Չնայած առաջին մոդելների բավականին հաջող տեխնիկական լուծումներին՝ սարքը ձեռք չբերեց լայն տարածում:

Ավելի ուշ հայտնվեցին էլեկտրոնային գրքեր՝ հիմնված հեղուկ բյուրեղների վրա, չնայած շոշափելի թույլտվության մեծացմանը և ավտոնոմ աշխատանքի ժամանակի մեծացմանը՝ նրանք ևս մեծ կիրառություն չգտան:

2007 թվականին էլեկտրոնային գրքերի շուկան մեծ վերելք ապրեց՝ կապված էլեկտրոնակին թղթի տեխնոլոգիայի առաջացմամբ: Դա տեսանելի է ինչպես ստեղծող ընկերությունների մեծ թվի, այնպես էլ մոդելների թվի մեծացմամբ: Էլեկտրոնային գրքերը՝ որպես կարդալու սարք, նույնիսկ իրենց հայտնիությամբ բավականին զիջում են սմարտֆոններին:

## ԳԼՈՒԽ 3: Հայ գիրքը

### Գլուխ 3.1. Հայ գրքի ստեղծումը

Գիրքը, ինչպես գիտենք, իրենից կարևորագույն արժեք է ներկայացնում: Բոլոր ժամանակներում հասարակության պատմական զարգացմանը զուգընթաց այն կատարել է ապագա սերունդներին տեղեկատվության փոխանցման բարդ գործառույթը, որով և հնարավորություն է ստեղծվել ճիշտ գնահատել անցյալը: Այս երևույթն ակամայից առավել ընդգծված է դառնում, երբ նայում ենք հետո՝ հայ գրքարվեստի պատմությանը: Ինչպես գիտենք, ամեն դար իր մոխիրից բաժին է հանել հայ ժողովրդին, և գոյատևման համար մղվող պայքարում նա կառչել է փրկության ակունքներից, և ազգը փրկվել է կործանումից գրքի և գրի ազգափրկիչ առաքելությամբ: Եվ այսօր ապագա սերունդներին են փոխանցվել պատմական փաստեր, գիտական ձեռքբերումներ, գրական-գեղարվեստական գործեր: Հայ գրքի և հայ տպագրության պատմությունը զուգահեռվել են իրար, ինչը Ռ. Իշխանյանի բնութագրությամբ «հեղաշրջիչ» է եղել մարդկության պատմության համար:

Հայ գրատպությունը անցել է զարգացման տարբեր փուլեր: Յուրաքանչյուր դարաշրջան իր երանգային շերտն է դրել հայ գրքի ձևավորման բարդ գործընթացում, որը և հանարավորություն է տվել եկող սերնդին՝ կատարելագործելու տպագրության արվեստը:

Օրինակ՝ Գուտենբերգի գյուտը Գերմանիայից անցել է Իտալիա և Հոլանդիա(1465), Շվեյցարիա և Չեխիա(1473): Արդեն 19-րդ դարի 2-րդ կեսին Եվրոպան նվաճել էր տպագրության արվեստը: Հայ գրատպության սկիզբ է համարվում 1512թ-ը, երբ լույս են տեսել առաջին հնատիպ գրքերը:

Մինչև 19-րդ դարի առաջին կեսը հայ առաջին տպագիր գիրք համարվել է Աբգար Թոխաթեցու «Սաղմոսարան»-ը (1565թ.): Սակայն նույն 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն ի հայտ են եկել հիշատակումներ 1512-1513 թթ. հրատարակությունների մասին, որոնցով էլ ձևավորվել է հայ տպագիր գրքի պատմությունը: Կատարված համեմատությունները հաստատել են, որ առաջին հնատիպ գրքերն ունեն նույն տառատեսակը, թղթի որակը, շարվածքը, ինչն էլ թույլ է տվել հաստատելու, որ նրանք պատկանում են նույն ժամանակահատվածին և նույն տպագրիչի արտադրանքն են: Սկզբնական շրջանում եղել են վարկածներ, որ առաջին տպագիր գիրքը

«Պարզատումար»-ն է, իսկ ավելի ուշ ճշտվել է, որ «Ուրբաթագիրք»-ն է: Ճշտվել է նաև տպագրիչը՝ Հակոբ, որն իրեն անվանել է Մեղապարտ, վայրը՝ Վենետիկ, տարեթիվը՝ 1512-1513թթ:

Հայ գրքարվեստի պատմության ձևավորումը տեղի է ունեցել պատմական Հայաստանի սահմաններից դուրս: Պատճառներից մեկը բուն հայկական տարածքներում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակն էր, որի արդյունքում մեծ չափերի էր հասնում արտագաղթը: Երկրորդն այն էր, որ եվրոպական տարբեր քաղաքներում ձևավորված հայկական գաղթօջախները յուրացնում էին տվյալ երկրի ձեռքբերումները, մասնակցում էին այդ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարցերի կարգավորման և զարգացման գործընթացին, այդ ամենը ծառայեցնում հայ ժողովրդի և սեփական գաղթօջախի շահերին: Փաստենք հետևյալը. Աբգար Դ-ի Թոխաթեցին Կ. Պոլսում հայերեն գիրք է հրատարակել դեռևս 1568թ, իսկ նույն Կ. Պոլսում թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է 1729թ.: Իրանում հայերեն առաջին գիրքը տպագրվել է 1638թ., երբ Միջին Արևելքում դեռևս տպարան գոյություն չունեի, իսկ պարսկերեն առաջին գիրքը տպագրվել է 1830թ.: Փաստերը խոսում են այն մասին, թե ինչ կարևոր նշանակություն է ունեցել գրքի տպագրությունը հայ իրականության մեջ:

Հայ գրքի պատմության համատեքստում կարևորվում են տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված գրացուցակները կամ գրքի մատենագիտությունները, որոնք լավագույնս պատկերացում են տալիս հայ գրքի և գրատպության անցած ուղու մասին: 19-րդ դարում հայ գրքի մատենագիտության պատմությունը թևակոխում է նոր գիտական փուլ՝ մատենագիտական ցանկերը ներկայացնելով որոշակի վերլուծություններով: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Իգնատիոս Փափագյանը կազմում է 1565-1800 թթ. տպագրված հայերեն գրքերի ցուցակ, որը մնում է անտիպ, բայց անտիպ այս աշխատանքը դառնում է Գ. Զարբհանայանի «Հայկական մատենագիտություն» գրքի հիմքը: Այսպես սկզբնավորվում է հայ տպագիր գրքի մատենագիտության պատմությունը, որը հետագա տասնամյակներում հսկայական առաջընթաց է

ունենում: Վենետիկի Միխիթարյան միաբանության անդամները պարբերաբար տպագրում են մատենագիտական ցանկեր, որոնցում ներկայացնում են իրենց մոտ պահվող, ինչպես նաև իրենց հրատարակած գրքերը: Հայ գրքի մատենագիտության պատմության մեջ ակնառու են դառնում այնպիսի անհատներ, ինչպիսիք են Ստ. Նազարյանը, Ալ. Խուդաբաշյանը, Հովհ. Շահխաթունյանցը, Գ. Զարբհանայանը, Գ. Գալեմբյարյանը, Գ. Լևոնյանը, Մ. Պոտուրյանը, Մ. Միանսարյանցը, Ղ. Ալիշանը և այլք: Նրանց կազմած մատենագիտությունների կամ մատենագիտական ցանկերի շնորհիվ հայ իրականության մեջ ձևավորվում են «ազգային», «գիտական» մատենագիտություն հասկացությունները, ինչն էլ այսօր հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տպագրված գրքերի քանակի, որակի, տպագրական նրբությունների, գտնվելու վայրի և այլ կարևոր գործոնների մասին:

Հայ գրքի մատենագիտության պատմությունը որակական նոր փուլ է մտնում, երբ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում 1946թ. ձեռնամուխ են լինում հայ գրքի ամբողջական մատենագիտության կազմման աշխատանքներին: Պետք է մեկ ամբողջականության մեջ ներառվեր և ներկայացվեր հայ տպագիր գիրքը: Առաջին հատորը պետք է ներառեր 1512-1800 թթ. տպագրված հայ հնատիպ գրքերը: Սակայն որոշ ժամանակ անց աշխատանքները դադարեցվում են, քանի որ բացակայում էին համապատասխան աշխատանքային պայմաններն ու միջոցները: 1958թ. Հայաստանի կուլտուրայի մինիստրության որոշմամբ վերսկսվում են աշխատանքները, գիտխորհրդին ներկայացվում են որոշ թեզիսներ և կանոնադրություն, որոնք սակայն մերժվում են՝ մինիստրության ծրագրերին չհամապատասխանելու պատճառով: Հատկապես գրքի կառուցվածքի, գրքերի նկարագրության հարցերը լուրջ քննարկումների նյութ են դառնում: Կանոնադրությունը, որն արտացոլում էր աշխատանքի նպատակը, գործառույթները, որոշ վերապահումներով հաստատվում է 1958թ. դեկտեմբերի 30-ին, որից հետո սկսվում են աշխատանքները: Առ այսօր հրատարակվել է հինգ հատոր՝ ներկայացնելով հայ գրքի պատմությունը 1512-1930թթ: Ավարտական փուլում է գտնվում է 6-րդ հատորը, որը ներառում է 1931-1940 թթ. հրատարակությունները:

Արդյունքում՝ յուրաքանչյուր հատոր ժամանակագրական կարգով հնարավորինս ամբողջական ներկայացնում է հայ տպագիր արտադրանքը՝ տպագրված աշխարհի տարբեր անկյուններում: Հատորների վերջում արտացոլվում են անձնանունների, վերնագրային, առարկայական, աշխարհագրական, ինչպես նաև տպարանների ու մատենաշարերի ցանկերը՝ այբբենական կարգով: Կատարվող հսկայածավալ աշխատանքը առավելագույնս նպաստում է հայ գրքի և մշակույթի պահպանության համընդհանուր գործին:

20-րդ դարի վերջում և հատկապես 21-րդ դարում հայ գրքի պատմության մեջ տեղի են ունենում որակական նոր փոփոխություններ: Խոսքը տեղեկատվական նոր տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի մասին է, որոնք ընդարձակում են գրքի պահպանության, խնամքի, հաջորդ սերունդներին փոխանցելու հնարավորությունները: Համակարգիչների մուտքը գրքերի աշխարհ հեղաշրջում է մինչ այդ եղած պատկերացումները, իսկ թղթային տարբերակի կողքին էլեկտրոնային գրքերի հայտնությունը հնարավորություն է տալիս ընդգրկել ընթերցողական լայն շրջաններ, ինչը հատկապես 21-րդ դարի սկզբին դառնում է լուրջ հիմնախնդիր: Գրքերի թվայնացման աշխատանքները գնալով ավելի մեծ ծավալներ են ընդգրկում՝ ամբողջական դարձնելով հայ գրքի պատմությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով կատարվածի վերլուծության արդյունքները՝ նպատակահարմար կլիներ.

- Աշխատանքային գործունեության ընթացքում այս ամենը փոխանցել ապագա սերունդներին
- Նրանց մեջ ձևավորել սեր գրքի նկատմամբ
- Բացատրել, թե ինչ բարդ ու երկարատև գործընթաց է եղել գրքի ստեղծումը
- Ինչպես է այն մագաղաթից հասել մինչև էլեկտրոնային գիրք:

Ճիշտ է էլեկտրոնային դարաշրջանում ընթերցողի համար արդեն իսկ ստեղծվել են այնպիսի պայմաններ, որ գիրքն ավելի հեշտորեն է հասու դառնում նրան, սակայն առաջնայինը պետք է լինեն գրադարանները, որոնք հանգիստ ու գրավիչ միջավայր են, և ընթերցողի համար լայն հնարավորություն է ստեղծվում իրագործել ստեղծագործական միտքը: Իսկ այս պարագայում մեծ է գրադարանավարի դերը, նրա հմտություններն ու կարողությունները, որոնք նա պետք է կարողանա հեշտորեն փոխանցել ընթերցողին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <https://grqamol.am/article/grqeri-masin/>
2. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%AB%D6%80%D6%84>
3. <http://www.encyclopedia.am/pages.php?hId=1075>
4. <http://fb.ru/article/156568/istoriya-sozdaniya-bumagi-proizvodstvo-bumagi>